ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08

31 մայիսի 2024 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 12 (տասներկու) անդամներ: Ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը նիստին ներկայացել է ժամը 10:15-ին:

Բացակայում էին համայնքի ավագանու անդամներ Կարապետ Հարությունյանը, Ավագ Սահակյանը և Արշալույս Վարդանյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակազմի Վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու Նոբաթ Շուշանյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը և քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Աշոտ Պողոսյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 11-ը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 08 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն/ անհամաձայնություն տրամադրելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 6 Դեմ - 5 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 35-Ա/

Ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» և «Արդար Հայաստան» խմբակցությունների ավագանու անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Աշխեն Մարուքյանը, Արմեն Սարգսյանը, Վալենտինա Կաղիյանը և Սոս Չիլինգարյանը լքեցին նիստերի դահլիճը՝ հայտարարելով, որ բոյկոտում են նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱԹ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ռիտա Միրզոյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N 20 բնակարանն անհատույց Միխաիլ Միրզոյանի ընտանիքին օտարելու մասին» N 11-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «Միխաիլ Միրզոյանի ընտանիքին» բառերը փոխարինել «Ռիտա Գրիգորիի Միրզոյանին» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.45 քմ ընդհանուր մակերեսով 20 բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Ռիտա Գրիգորիի Միրզոյանին՝ ծնված 1955 թվականի փետրվարի 11-ին:».

3)որոշման 2-րդ կետում «Միխաիլ Միրզոյանի» բառերը փոխարինել «Ռիտա Գրիգորիի Միրզոյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ն. Շուշանյանի զեկույցից հետո նիստը վարող Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու 6 անդամներով նիստը շարունակելու և որոշումներ ընդունելու հետ կապված տեխնիկական խնդիր կա լուծելու, առաջարկեց Ն. Շուշանյանին զբաղեցնել իր տեղը մինչև հարցը բանավոր հարցումներով պարզաբանում ստանա: Ավագանու անդամ Էդիկ Պիճիկյանն առաջարկեց նիստն ընդհատել և հարցը քննարկել: Հակոբ Բալասյանն ընդունեց առաջարկը և քվերակեցին նիստն ընդհատելու որոշում ընդունելու համար:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 08 ՆԻՍՏՆ ԸՆԴՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 08 նիստն ընդհատել 15 րոպեով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 36-Ա/

Ժամը 10:15 նիստին ներկայացավ և գրանցվեց ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը:

Ընդմիջումից հետո Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ մի փոքր քննարկում անցկացրեցին և կարծում են, որ նիստն օրինական է, այն կարելի է շարունակել, սակայն կդիմեն ՏԿԵ նախարարություն տվյալ դեպքի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու խնդրանքով և առաջարկեց օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ մասնակցել քվեարկությանը:

Կողմ - 7 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 37-Ա/

Լսեցին

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ /ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ և 16-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ և

29-րդ կետերի ու հիմք ընդունելով հանրային լսման 2024 թվականի մայիսի 17-ի N 03 արձանագրությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.«Արմա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրում գտնվող 07-055-0212-0139 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում լիթոիդային պեմզայի հաստատված պաշարների արդյունահանման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն/անհամաձայնություն:

2. Առաջարկել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հակոբ Բալասյանը ներկայացրեց, որ հանրային լսումների անցկացման կարգում փոփոխություններ են կատարվել, նախադեպ չունենք, առաջին անգամ է, որ նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելը քննարկվում է ավագանու նիստի ժամանակ: Բալասյանը տեղեկացրեց, որ Ջրաբեր գյուղում մեծ բողոք է, գյուղի բնակիչները տարբեր ատյաններ են դիմել հանքեր չտրամադրելու հարցով: Նա ասաց, որ ավագանու նիստից առաջ Ջրաբեր գյուղի բնակիչներ էին եկել, որ մասնակցեն նիստին, բայց քանի որ համայնքի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով չեն դիմել, նրանց հուզող բոլոր հարցերը ավագանու անդամների կողմից կլսվեն նիստից հետո:
Ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը հայտարարեց, որ Ջրաբեր գյուղի բնակիչները դեմ են նախատեսվող գործունեության իրականացմանը:
Հակոբ Բալասյանը դիմեց Ջրաբեր բնակավայրի բնակիչներին՝ հայտարարելով, որ հանրային լսումները կազմակերպվել են բացարձակապես օրենքի տառին համապատասխան, և որևէ աշխատակից չի միջամտել այդ աշխատանքներին: Գյուղի բնակիչներից մոտ 10 հոգի է մասնակցել հանրային լսումներին, որոնք համաձայնություն են տվել գործունեության իրականացմանը: Նա ասաց, որ որպես համայնքի ղեկավար, որպես համայնապետարանի աշխատակիցներ, իրենք պայմաններ ենք ապահովել, որ բնակիչները իրենց կարծիքը հայտնեն:

Ավագանու անդամ Է. Պիճիկյանն առաջարկեց ձեռնպահ քվեարկել և նորից հանրային լսումներ կազմակերպել: Հ. Բալասյանը պատասխանեց, որ հանրային լսումներ չեն կարող կազմակերպել, քանի որ լսումներն արդեն անցկացվել են: Նա նույնպես առաջարկեց, որ ձեռնպահ քվեարկեն, մինչև հաջորդ նիստը և, եթե անհրաժեշտ լինի, արտահերթ նիստ կնշանակվի:

Դ. Դանիելյանն էլ ասաց, որ եթե նույն կազմով Ջրաբեր գյուղի բնակիչները գան իրենց մոտ, դիմեն, որ հանրային լսումների ընթացքում սխալվել են, իրենք դեմ կքվեարկենք, բայց նոր հանրային լսումներ չի լինելու, արդեն օրենքով անցկացվել է:

Ավագանու նիստին ներկա ավագանու անդամները որոշեցին ձեռնպահ քվեարկել որոշման նախագծին:

Կողմ - 0 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումը չընդունվեց

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **ավագանին որոշում է.**

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 35/8 հասցեի 0.00172 հեկտար մակերեսով (վկայական՝ N 16052024-07-0143, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0025-0129) բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 7 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 38-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 26-ը, ժամը՝ 10:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 7 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 39-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ _____

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ